

# ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌՈՔԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅԻՄԻ 9-Ի ԱՌԻԹՈՎ

09.05.2022



## Սիրելի՛ սյունեցիներ

Մայիսի 9-ին ավանդաբար Հաղթանակի ու խաղաղության տոնն ենք նշում. ինչ իրավիճակում էլ այսօր դիմավորենք օրը, այն իր պատմական նշանակությունն ու խորհուրդը չի կարող կորցնել: Ավելին՝ Մայիսի 9-ը գալիս է մեզ թե՛ ոգեշնչելու, թե՛ սթափեցնելու ու դասեր տալու, թե՛ հիշեցնելու սերունդների հանդեպ ունեցած մեր պարտքի մասին, այն մասին, որ պարտավոր ենք ունենալ հաղթանակներ, ընդ որում՝ բոլոր ոլորտներում ու ամենալայն իմաստով...

Իսկ այսօր ու այսուհետ պետք է աշխատել այդ նպատակի համար՝ ամեն օր ու անդուլ նվիրվածությամբ:

Մայիսի 9-ը մեզ համար տոնական դարձավ 1945-ին Մեծ հայրենականում տարած հաղթանակով, որին նաեւ բազմաթիվ հայորդիներ մասնակցեցին, նրանց թվում՝ հազարավոր սյունեցիներ: Բոլորիս խոնարհումը՝ մեր հերոս պապերի հիշատակին, հարգանքը՝ այն սակավաթիվ վետերաններին, որ մեր կողքին են:

1992-ին Շուշիի ազատագրմամբ Մայիսի 9-ը նոր արժեք ստացավ հայերիս համար, այն հայոց նորագույն պատմության փառապանծ էջն է, իսկ հաղթանակները գնահատել, նրա հերոսներին հիշել ու օրինակներով ոգեշնչվել միշտ է պետք... Կորստի ցավից ոչ թե թեւաթափ եղած, այլ առավել ամրացած պիտի դուրս գանք ու ճիշտ ուղենշենք հետագա անելիքները:

Դրա համար հարկավոր է ազգային միասնությունն ու համախմբվածությունն, ինքներս մեզ ու աշխարհին սեփական ենք ցույց տալու ու ինքնուրույն խոսք ասելու իրավունքը վաստակել է պետք, իսկ դրա առաջին քայլը ուժեղ հայրենիքի կառուցումն է:

Նախօրեին՝ մայիսի 8-ին, նաեւ Երկրապահի օրն ենք նշում, որի առիթով շնորհավորում եմ ԵԿՄ բոլոր անդամներին, որոնց դերն ու ներդրումն անգնահատելի է Հայոց բանակաշինության գործում, նաեւ առաջին Արցախյան, Ապրիլյան քառօրյա ու 2020-ի Արցախյան պատերազմներում:

Սիրելի՛ սյունեցիներ, ցանկանում եմ բոլորիս, որ կարողանանք վերագտնել Մայիսի 9-ի հաղթական զգացողությունն ու հետագա տարիներին այն դիմավորենք այլ մտքերով, հույսերով ու լավատեսությամբ:

Խաղաղությունն բոլորիդ օջախներին ու մեր հայրենիքին: